

ՀԱՐԱՄՅԻՆ ԳԱԼԻՑՈՐՆՈՑ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ (SCRRA)

ՀԱՐԱՄՅԻՆ ՈՒՆԿՆԵՐՈՒԹԵԱՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՍ ԾԱՆՈՒՑՈՒՄ / Խորագիր VI Ուղեվարձի քաղաքականության փոփոխության վերլուծում

Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանային Երկաթուղիի Իշխանութիւնը (SCRRA) պիտի կատարէ հանրային ունկնդրութիւն մը իր հոգաբարձութեան ժողովին, Ուրբաթ, Փետրուար 26, 2021ին, արժեւորելու համար շաբաթավերջերուն մանուկներու ձրի ճամբորդութեան (Kids Ride Free on Weekends) եւ հինգ օրուան ճկուն անցաթուղթի (5-Day Flex Pass) խրախուսական ուղեվարձերու ներառումը Metrolinkի կանոնական ուղեվարձերու կառոյցին մէջ: Ունկնդրութիւնը պիտի անդրադառնայ նոր ուղեվարձերու պատճառներուն եւ անոնց ազդեցութիւնը Metrolinkի սպասարկութեան վրայ՝ Օգոստոս 29, 2020ին եւ Սեպտեմբեր 2, 2020ին այդ խրախուսական ուղեվարձերու ուժի մէջ դրուելէն ետք: Շաբաթավերջերուն մանուկներու ձրի ճամբորդութեան խրախուսումը պիտի վերջանայ Կիրակի, Փետրուար 28, 2021ին եւ հինգ օրուան ճկուն անցաթուղթի փորձառական ծրագիրը՝ Չորեքշաբթի, Մարտ 3, 2021ին, եթէ այս ուղեվարձերը կանոնական ուղեվարձերու կառոյցին մաս չդառնան: Իշխանութիւնը փափաքելի կը գտնէ այս երկու ուղեվարձերը կանոնական ուղեվարձերու կառոյցին մաս դարձնել՝ իր աճը շարունակելու եւ այս ուղեվարձերուն հետեւանքով ձեռք բերած ճամբորդները պահպանելու համար:

Հանրային ունկնդրութիւնը պիտի նշուի SCRRAի հոգաբարձութեան Ուրբաթ, Փետրուար 26, 2021, առաւօտեան ժամը 9:00ի ժողովի օրակարգին մէջ

<https://metrolinktrains.com/about/board-meetings/agendas-documents/>

Ուղեվարձերու առաջարկուած ճշգրտումներուն, ուղեվարձերու քաղաքականության փոփոխութիւններուն եւ քաղաքականութեան որդեգրումներու մասին տեղեկութիւնները տրամադրելի են հրապարակային քննութեան Metrolink կայքէջին մէջ՝ www.metrolinktrains.com: Կարելի է բանաւոր կամ գրաւոր կերպով հանրային ունկնդրութեան ներկայացնել մեկնաբանութիւններ եւ թելադրանքներ կամ գրառում կատարել հանրային ունկնդրութենէն առաջ, սեղմելով “eComment” ընտրանքը՝ անմիջապէս էլեկտրոնային մեկնաբանութիւն մը ներկայացնելու համար www.metrolinktrains.com/ecommments կայքէջին մէջ, կամ թղթատարով, եթէ ստացուած է հանրային ունկնդրութենէն առաջ՝ Metrolink Faresի ուշադրութեան SCRRAի կեդրոնատեղիին մէջ, կամ հեռապատճէնով դրկուած (213) 452-2021 թիւին՝ Metrolink Faresի ուշադրութեան, ունկնդրութենէն առաջ: Անկախաբար հաղորդակցութեան ձեւէն, բոլոր մեկնաբանութիւնները պէտք է ներկայացուած ու ստացուած ըլլան Փետրուար 12, 2021էն առաջ: **Բոլոր նախորդ հանրային մեկնաբանութիւնները եւ թելադրանքները, որոնք ստացուած են ըստ սկզբնական Հանրային Ունկնդրութեան Ծանուցումին պիտի մատուցուին Հոգաբարձուներու Խորհուրդին եւ մուծուին հանրային ունկնդրութեան արձանագրութեան մէջ:** Այս նիւթը կրնայ շարունակուիլ հոգաբարձութեան կողմէ՝ ըստ իր հայեցողութեան, աւելի ուշ ժամանակի մը կամ թուականի մը: